

## ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### ՈՒՂԵՂԱՅԻՆ

### ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

**Հիմնաբառեր.** ուղեղային կենտրոններ, օտարերկրյա ազդեցություն, ինտելեկտուալ ինքնիշխանություն, հանրային քաղաքականություն, ֆինանսական ռեսուրսներ, հեղափոխող լրագրություն, քաղաքական մշակույթ

Հողվածը նվիրված է ուղեղային կենտրոնների ոլորտում օտարերկրյա ազդեցության հիմնախնդիրների վերլուծությանը: Քննարկվում են ուղեղային կենտրոնների օտարերկրյա ֆինանսավորման և, այդ համատեքստում, պետության ինտելեկտուալ (մտավոր) ինքնիշխանության ապահովման հիմնահարցեր, ինչպես նաև նման խնդիրների անտեսման պարագայում ի հայտ եկող ռիսկեր: Անդրադարձ է կատարվում այդ ոլորտի միջազգային փորձին և արձանագրվող իրողություններին: Ամփոփման մեջ ներկայացվում են որոշակի առաջարկներ, որոնք կարող են օգտակար լինել ուղեղային կենտրոնների ոլորտի կանոնակարգման, զարգացման ապահովման և վերջիններիս մտավոր ռեսուրսն առավել արդյունավետորեն ազգային շահերին ծառայեցնելու համար:

### Երաժույթություն

Յուրաքանչյուր կազմակերպության բնականոն գործունեության կազմակերպման և զարգացման համար առանցքային նշանակություն ունեն ֆինանսական միջոցները: Այս առումով, ուղեղային կենտրոնները բացառություն չեն: Միաժամանակ, նման հաստատությունները և դրանց շարքում հատկապես նրանք, որոնք հանրային ու փորձագիտական դաշտում դիրքավորվում են որպես անկախ կառույցներ, մշտապես փորձում են բազմազանեցնել իրենց ֆինանսավորման աղբյուրները: Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս չեզոքացնել կամ առնվազն հավասարակշռել հնարավոր ազդեցությունները և հրապարակումներում, ինչպես նաև ուղեղային կենտրոններին բնորոշ այլ գործառույթներում պահպանել համեմատական օբյեկտիվությունն ու չեզոքու-



### Վարդան ԱՌՈՅԱՆ

Քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

2002 թ. ավարտել է ԵՐՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ), 2010 թ.՝ ԵՄ քաղաքական դասընթացների երեկանյան դպրոցը, 2015 թ.՝ ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը: 2004 թ.-ին ստացել է գիտությունների թեկնածուի, 2018 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2018 թ.-ից առայսօր ՀՊՏՀ «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի տնօրենի տեղակալ-ավագ փորձագետ է: 2012 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնում: Ամերիկյան քաղաքական գիտության ասոցիացիայի (ք. Վաշինգտոն) և Ռուսաստանի քաղաքական գիտության ասոցիացիայի (ք. Մոսկվա) անդամ է: Հեղինակ է 60-ից ավելի գիտական հրատարակումների:

 ORCID ID: <https://orcid.org/0000-0002-4974-0312>

թյունը: Այնուամենայնիվ, հանրային դատում պարբերաբար հայտնվում են տեղեկություններ և փաստեր, որոնք մտահոգություններ են առաջացնում և վնասում ուղեղային կենտրոնների՝ որպես անաչառ փորձագիտական, հետազոտական, վերլուծական կառույցների դրական հանրային համբավը: Այդ երևույթների շարքում առանցքային տեղ է զբաղեցնում ուղեղային կենտրոնների կամ դրանց առանձին փորձագետների վրա օտարերկրյա նշանակալի ազդեցության խնդիրը:

Գաղտնիք չէ, որ ֆինանսական միջոցների օտարերկրյա (և ոչ միայն) ծագման աղբյուրը հաճախ գործիք է ֆինանսավորվող սուբյեկտների գործունեության կամ գործողությունների վրա՝ սեփական շահերին համապատասխան ազդելու կամ որոշակի ուղղորդումներ իրականացնելու համար: Այդպիսի ֆինանսավորումն իրականացվում է տարբեր ձևաչափերով, այդ թվում՝ քողարկված եղանակներով: Թեև երևույթն ինքնին նոր չէ, սակայն վերջին երկու տասնամյակներում նոր հանրային հնչեղություն և որակապես նոր դրսևորումներ է ստանում: Դա պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների և փափուկ ուժի գործիքակազմի, սոցիալական մեդիայի բուռն զարգացմամբ, ինչպես նաև հանրային քաղաքականության, որոշում կայացնողների ու լայն հասարակության վրա ազդեցության նոր գործիքների ու հնարավորությունների ստեղծմամբ ու կիրարկմամբ:

Հաշվի առնելով որոշ երկրներում ուղեղային կենտրոնների՝ ազգային մտավոր կապիտալի բաղկացուցիչ լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հաստատությունների՝ հաճախ նշանակալի դերակատարությունն ու ազդեցությունը հանրային քաղաքականությունում, արդի աշխարհում օտարերկրյա ազդեցության խնդիրը դասվում է ուղեղային կենտրոնների գաղափարական անկախությանն ու պետության ինտելեկտուալ ինքնիշխանությանը սպառնացող լրջագույն մարտահրավերների շարքում:

## Վերլուծություն

Խնդրի համակողմանի վերլուծության նկատառումներից ելնելով՝ հարկ է նախառաջ, նշել, որ, որոշ բացառություններով հանդերձ, ուղեղային կենտրոնները շահույթ չհետապնդող հաստատություններ են: Վերջիններիս ֆինանսավորման և եկամուտների ձևավորման առավել տարածված աղբյուրներն են պետական ֆինանսավորումը, համալսարանի կողմից ֆինանսավորումը, հետազոտական պատվերները, դրամաշնորհները, նվիրատվությունները, խորհրդատվական և փորձագիտական ծառայությունները, ոչ ֆորմալ կրթական ծառայություններն ու պասիվ եկամուտները<sup>1</sup>: Այնուամենայնիվ, կախված հաստատության առաքելությունից, նպատակներից, կազմակերպարավական ձևից, գործառնական առանձնահատկությունից, տնօրինվող մտավոր ու կազմակերպական ռեսուրսներից, օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ գործոններից, ֆինանսավորման թվարկված ձևաչափերից որոշները որևիցե ուղեղային կենտրոնի դեպքում կարող են բացակայել կամ ունենալ տարբեր տեսակարար կշիռներ:

Հայտնի փաստ է նաև, որ ուղեղային կենտրոնները որոշակիորեն ազդեցություն են ունենում որոշում կայացնողների, քաղաքական վերնախավերի և լայն հանրության վրա, մասնավորապես՝ քաղաքականությանն առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ պատկերացումների, կարծիքների ու դիրքորոշումների ձևավորման և առաջնդման առումով: Տեղին է նշել, որ որոշ երկրներում ուղեղային կենտրոնների ազդեցությունն այնքան նշանակալի է, որ վերջիններս ձևավորել են իշխանության յուրահատուկ բևեռ և հաճախ դիտարկվում են որպես «հինգերորդ իշխանություն»<sup>2</sup>: Հետևաբար՝ արտերկրի ֆինանսական դոնոր սուբյեկտները, ազդելով ուղեղային կենտրոնների գործունեության օրակարգի, ուղղվածության ու գործունեության «գաղափարաբանության» վրա, հնարավորություն են ստանում տարբեր խորության

<sup>1</sup> Աթոյան Վ. (2020), Ուղեղային կենտրոնների ռազմավարական արդիականացման հարցեր, «Ամբերդ» տեղեկագիր, 3 (4), էջ 65:

<sup>2</sup> Աթոյան Վ. (2019), Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները, «Զանգակ» հրատ., Եր., էջ 6:

կամ տարբեր աստիճանի ազդեցություն ունենալու որոշակի երկրում հանրային քաղաքականության, հասարակական տրամադրությունների, քաղաքական խոսույթի և ազգային օրակարգի ձևավորման վրա: Թեև երևույթն առավելապես բնորոշ է զարգացող կամ անցումային փուլում գտնվող երկրներին, սակայն նման իրողություններ հաճախակի արձանագրվում են նույնիսկ զարգացած երկրներում, որտեղ ուղեղային կենտրոնների ոլորտի գոյության և զարգացման համար առկա է շատ ավելի նպաստավոր «էկոհամակարգ», ստեղծված են առավել բարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ և, միաժամանակ, հասարակական, լրատվական, գիտակրթական և համանման բնույթի այլ կազմակերպությունների արտաքին ֆինանսավորման պայմանները խստորեն կանոնակարգված են, իսկ որոշ դեպքերում նույնիսկ գործում են արտերկրյա ֆինանսավորման կոշտ սահմանափակումների իրավական կառուցակարգեր: Ակնհայտ է, որ նման խիստ սահմանափակումները հաճախ պայմանավորված են նրանով, որ արտերկրից ստացվող ֆինանսավորումը կարող է ունենալ պետական կառավարման գործընթացի, հանրային տրամադրությունների ձևավորման և հանրային քաղաքականության վրա միջնորդավորված ազդեցություն ձեռք բերելու քողարկված նպատակ: Տարբեր ձևաչափերով, շեշտադրումներով և որոշակի տարբերություններով՝ նման իրավական ակտեր գործում են Մեծ Բրիտանիայում (Charitable Trusts Act), ԱՄՆ-ում (Foreign Agents Registration Act), ինչպես նաև ՌԴ-ում, Ֆրանսիայում, Իսրայելում, Չինաստանում և այլ երկրներում<sup>3</sup>:

Այնուամենայնիվ, նույնիսկ խիստ կանոնակարգման և սահմանափակումների պարագայում վերոնշյալ երկրների լրատվական և փորձագիտական դաշտում պարբերաբար շրջանառվում են տեղեկություն-

ներ, որոնք ի զորու են կասկածի տակ դնելու վերլուծաբանական համայնքի որոշ ներկայացուցիչների անաչառությունը: Այսպես՝ մի քանի տարի առաջ The New York Times պարբերականի աշխատակիցների լրագրողական հետաքննության արդյունքում պարզվել էր, որ ամերիկյան մի շարք հայտնի ուղեղային կենտրոններ՝ Բրուքինգսի ինստիտուտը, Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնը, Ատլանտյան խորհուրդը, միլիոնավոր դոլարներ են ստացել օտարերկրյա կառավարություններից, որոնք այդ ճանապարհով անուղակիորեն առաջ էին մղում իրենց շահերն ԱՄՆ-ի քաղաքական վերնախավում: Դրանք հիմնականում նավթարդյունահանող երկրներն էին, այդ թվում՝ Քաթարը, ԱՄԷ-ն, Նորվեգիան: Լրագրողների կարծիքով, վերոնշյալ ուղեղային կենտրոնները, օգտվելով այն հեղինակությունից, որ վայելում էին ամերիկյան քաղաքական վերնախավում՝ որպես անաչառ կազմակերպություններ, իրենց դոնորների շահերից բխող համապատասխան քաղաքականություն իրականացնելու նպատակով ազդեցություն էին գործում ԱՄՆ-ի քաղաքական գործիչների վրա: Ավելին, բազմաթիվ փորձագետներ խոստովանել են, որ իրենց հաստատություններին ֆինանսապես աջակցող օտարերկրյա կառավարությունների նկատմամբ քննադատությունը բացառելու, ինչպես նաև վերջիններիս գահացնող հետազոտությունների արդյունքներ ապահովելու նպատակով իրենց վրա ճնշում է գործադրվել<sup>4</sup>: Հավելենք, որ վերջին տարիներին, ամերիկյան ուղեղային կենտրոնների վրա ուղղակի կամ անուղակի կերպով ազդեցության հնարավոր մեծացման հետ կապված (այդ թվում՝ Չինաստանի և Ռուսաստանի կողմից), ԱՄՆ-ի հասարակական, քաղաքական և ակադեմիական շրջանակներում մեծ անհանգրստություն է նկատվում, ինչի հետևանքով հաճախակիացել են նաև այդ խնդիր-

<sup>3</sup> Աթոյան Վ., Թադևոսյան Ռ. (2016), Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում, «21-րդ դար», 6 (70), էջ 70-84: Գալստյան Դ., Խալաթյան Մ. (2016), «Օտարերկրյա գործակալների մասին» օրենքի վերաբերյալ տարբեր երկրների փորձը, «Գլոբուս», 4 (73), էջ 51-57:

<sup>4</sup> Lipton E., Williams B., Confessore N., *Foreign Powers Buy Influence at Think Tanks*, «The New York Times», (Sep/6/2014), Retrieved August 30, 2020, [https://www.nytimes.com/2014/09/07/us/politics/foreign-powers-buy-influence-at-think-tanks.html?\\_r=0](https://www.nytimes.com/2014/09/07/us/politics/foreign-powers-buy-influence-at-think-tanks.html?_r=0)

ներին նվիրված տարատեսակ հետազոտություններն ու զեկույցները<sup>5</sup>:

Միաժամանակ, որոշ երկրներ սեփական շահերն առաջ մղելու նպատակով աշխատում են նաև ազդեցիկ ուղեղային կենտրոնների որոշ փորձագետների՝ որպես լրբբիստների ծառայեցնելու ուղղությամբ: Ի դեպ, արդեն հիշատակված Ատլանտյան խորհրդի անունը հատկապես հաճախ է շրջանառվում նման խնդրահարույց հարցերում: Այս առումով, մեզ հետաքրքրող օրինակներից հարկ է նշել Զորջթաունի համալսարանի պրոֆեսոր, Ատլանտյան խորհրդի ավագ հետազոտող Բրենդա Շեֆերին, որն ունեցել է Ադրբեջանի «Սոկար» նավթային ընկերության նախագահի խորհրդատուի կարգավիճակ և հայտնի է որպես Ադրբեջանի ակտիվ լրբբիստ: Հետաքրքրական է, որ նշված խնդրին ժամանակին բազմիցս անդրադարձել են նաև աշխարհի առաջատար որոշ լրատվամիջոցներ, այդ թվում՝ ամերիկյան հայտնի *Huffington Post*-ը<sup>6</sup>: Հավելենք, որ ներկայում Ատլանտյան խորհուրդը ոչ միայն ամերիկյան, այլև աշխարհի ամենաազդեցիկ ուղեղային կենտրոնների շարքում է (Փենսիլվանիայի համալսարանի վերջին վարկանշավորման համաձայն՝ 21-րդը)<sup>7</sup>:

Ամերիկյան լրատվամիջոցներում Ատլանտյան խորհրդի մասին վերջին հրապարակումներից հարկ է առանձնացնել նաև *The Washington Free Beacon* առցանց պարբերականում լույս տեսած հոդվածը, որտեղ հեղինակը քննարկում է վերոնշյալ ուղեղային կենտրոնի հաճախ ոչ այդքան թափանցիկ հարաբերություններն ու խընդրահարույց կապերը Թուրքիայի նախա-

գահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կառավարության, վերջինիս ընտանիքի որոշ անդամների և Թուրքիայի իշխող՝ «Արդարություն և զարգացում» կուսակցության հետ: Մասնավորապես՝ նշվում է տարբեր ձևաչափերով և տարբեր նախագծերի իրականացման համար Թուրքիայից, ինչպես նաև ոչ ժողովրդավարական այլ կառավարություններից և օտարերկրացիներից ստացվող հսկայական ֆինանսական միջոցների մասին, որոնք, հեղինակի գնահատմամբ, ազդեցություն են ունենում Ատլանտյան խորհրդի գործունեության և հրապարակումների օբյեկտիվության ու անաչառության վրա<sup>8</sup>: Ի դեպ, նույն հոդվածում հեղինակն անդրադարձ է կատարում նաև 2017 թ. մայիսին Էրդողանի ԱՄՆ այցի ընթացքում վերջինիս թիկնապահների կողմից Թուրքիայի դեսպանատան դիմաց ցույցի մասնակիցների վրա հարձակումներին, որոնց մեջ, ինչպես հայտնի է, մեծ թիվ էին կազմում ԱՄՆ-ի հայ համայնքի ներկայացուցիչները: Հատկանշական է, որ այդ ժամանակ Էրդողանն իր պատվիրակության հետ մասնակցելիս է եղել Ատլանտյան խորհրդի փորձագետների հետ off-the-record ձևաչափով հանդիպմանը:

Այս առումով, հարկ է նշել նաև, որ դեռևս 2019 թ. հուլիսի 25-ին ՌԴ գլխավոր դատախազության որոշմամբ Ատլանտյան խորհրդի գործունեությունը ՌԴ տարածքում ճանաչվել է ոչ ցանկալի և որակավորվել որպես երկրի սահմանադրական կարգի հիմքերի և անվտանգության սպառնալիք<sup>9</sup>: Հիմք ընդունելով ՌԴ գլխավոր դատախազության այս որոշումը՝ 2019 թ. հուլիսի 29-ին ՌԴ արդարադատության նախարարությունը ամերիկյան այդ կազմա-

<sup>5</sup> *Stu Chinese Influence & American Interests (Promoting Constructive Vigilance)*. Report of the Working Group on Chinese Influence Activities in the United States, Hoover Institution Press, Stanford University, 2018, Retrieved August 25, 2020, [https://www.hoover.org/sites/default/files/research/docs/chineseinfluence\\_americaninterests\\_fullreport\\_web.pdf](https://www.hoover.org/sites/default/files/research/docs/chineseinfluence_americaninterests_fullreport_web.pdf); Smaglyi K., *Hybrid Analytica: Pro-Kremlin Expert Propaganda in Moscow, Europe and the U.S.* (A Case Study on Think Tanks and Universities). Institute of Modern Russia, Research Paper, Retrieved September 7, 2020, [https://static1.squarespace.com/static/59f8f41ef14aa13b95239af0/t/5c6d8b38b208fc7087fd2b2a/1550682943143/Smaglyi\\_Hybrid-Analytica\\_10-2018\\_upd.pdf](https://static1.squarespace.com/static/59f8f41ef14aa13b95239af0/t/5c6d8b38b208fc7087fd2b2a/1550682943143/Smaglyi_Hybrid-Analytica_10-2018_upd.pdf)

<sup>6</sup> Bruckner T., Foreign Lobbyist Gets Free Platform at Georgetown University, Atlantic Council, *Huffington Post* (Jun/25/2015), Retrieved September 7, 2020, [https://www.huffingtonpost.com/till-bruckner/brenda-shaffer-oil-gas\\_b\\_7654646.html?fbclid=IwAR2K-054Gt3bA-weYbiv7\\_CK3EG16ijXNQZnY0oVAW4j\\_60Mn-VSlnE\\_ceY](https://www.huffingtonpost.com/till-bruckner/brenda-shaffer-oil-gas_b_7654646.html?fbclid=IwAR2K-054Gt3bA-weYbiv7_CK3EG16ijXNQZnY0oVAW4j_60Mn-VSlnE_ceY)

<sup>7</sup> McGann, James G., "2019 Global Go To Think Tank Index Report" (2020). *TTCSP Global Go To Think Tank Index Reports*. 17, p. 229, Retrieved September 3, 2020, [https://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1018&context=think\\_tanks](https://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1018&context=think_tanks)

<sup>8</sup> Johnson, Elina. At the Atlantic Council, Foreign Money Talks, *The Washington Free Beacon*, August 7, 2020, Retrieved, August 30, 2020, <https://freebeacon.com/national-security/at-the-atlantic-council-foreign-money-talks/>

<sup>9</sup> «Генеральная прокуратура Российской Федерации приняла решение о признании нежелательной на территории Российской Федерации деятельности иностранной неправительственной организации», (25/07/2019), дата обращения: 19/11/2020, <https://www.genproc.gov.ru/smi/news/genproc/news-1662746/>

կերպությունը ներառել է ՌԴ-ում անցանկալի համարվողների ցանկում<sup>10</sup>:

Վերոնշյալի համատեքստում առնվազն հիմնավոր հարցեր են առաջանում մեր որոշ պետական կառույցների մոտեցումների ու նախընտրությունների վերաբերյալ: Այսպես՝ հայտնի է, որ 2019 թ. հուլիսի 14-18-ը ՀՀ ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակությունը ԱՄՆ-ում է գտնվել աշխատանքային այցով<sup>11</sup>, որի շրջանակում հուլիսի 15-ին ՀՀ ԱԺ նախագահն այցելել է Ատլանտյան խորհուրդ և հանդես եկել համապատասխան ելույթով<sup>12</sup>: Նշված այցից երկու ամիս անց՝ 2019 թ. սեպտեմբերի 11-ին, ՀՀ ԱԺ նախագահը Երևանում ընդունել է Ատլանտյան խորհրդի փոխնախագահի գլխավորած պատվիրակությանը, որի ընթացքում, ըստ պաշտոնական հաղորդագրության, շարունակվել է Վաշինգտոնում սկսված երկխոսությունը<sup>13</sup>: Մեծապես կարևորելով արտերկրի, այդ թվում՝ ԱՄՆ-ի փորձագիտական հանրույթի ներկայացուցիչների և ուղեղային կենտրոնների հետ ՀՀ ԱԺ փոխգործակցությունը, այնուամենայնիվ, հետաքրքիր է իմանալ՝ ինչու կամ հատկապես ինչ նպատակով է ԱՄՆ-ում գործող գրեթե 2000 ուղեղային կենտրոնների շարքում, որոնցից առնվազն մի քանի տասնյակը նույնպես նշանակալի ազդեցություն ունեն ԱՄՆ-ի հանրային քաղաքականության և քաղաքական օրակարգի ձևավորման վրա, այցելության, ելույթի և հետագա համագործակցության զարգացման համար ընտրվել հենց այս կազմակերպությունը, որը հայտնի է իր թուրքամետ, ադրբեջանամետ մոտեցումներով և մեզ հակառակորդ երկրների հետ հաճախ ոչ թափանցիկ փոխկապվածություններով, իսկ մեր ռազմավարական դաշնակից երկրի կողմից դիտարկվում է որպես անվտանգության սպառնալիք: Ինչու չի ընտրվել փոքրիշատե հավասարակշռված մոտեցումներով հայտնի մեկ այլ

ուղեղային կենտրոն կամ, օրինակ, ԱՄՆ-ում այդ պահին իշխող հանրապետական վարչակարգի հիմնական մտավոր հենարաններից համարվող «Ժառանգություն» հիմնադրամը: Ինչու աշխարհաքաղաքական տարբեր բևեռների ուղեղային կենտրոնների հետ համագործակցության հարցում չի պահպանվում առնվազն հավասարակշռություն և փորձ չի արվում հարաբերություններ հաստատելու, օրինակ, Չինաստանի համապատասխան կառույցների հետ, որոնք այսօր չափազանց նշանակալի գործոն են այդ երկրի հանրային քաղաքականությունում և մեծապես օժանդակում են որոշում կայացնողներին արտաքին քաղաքականության օրակարգ ձևավորելիս, ինչպես նաև նման փոխգործակցությունը կարող էր որոշակի դրական ազդակ հաղորդել հայ-չինական բազմաշերտ կապերին: Եվ, հատկապես, ինչու նման համագործակցություն չի հաստատվել նաև ՀՀ ռազմաքաղաքական դաշնակից ՌԴ-ում գործող բավական ազդեցիկ ուղեղային կենտրոնների հետ, որոնք խորհրդատվություն են տրամադրում քաղաքական վերնախավին և որոշում կայացնողներին: Ակնհայտ է՝ վերջիններիս հետ փոխգործակցությունը կարող էր ՀՀ ազգային շահերի առաջնդման գործում հավելյալ արդյունք ապահովել:

Ինչևէ, քննարկվող հարցի համատեքստում հատկանշական է Transparify կազմակերպության՝ մի քանի տարի առաջ իրականացրած ուսումնասիրությունը, որի արդյունքում պարզվել էր, որ բրիտանական մի շարք ուղեղային կենտրոնների ֆինանսական եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը թափանցիկ չէ, և վերջիններիս եկամտային հոսքերը ևս իրականացվում են ոչ թափանցիկ ճանապարհներով: Կազմակերպության գնահատմամբ, այդ ոչ թափանցիկ շրջանառությունը կազմել է ավելի քան 22 միլիոն ֆունտ ստեռ-

<sup>10</sup> «Минюст России включил НПО "Атлантический совет" в перечень нежелательных», (29/07/2019), дата обращения: 19/11/2020, <https://tass.ru/ekonomika/6711848>

<sup>11</sup> Տես ՀՀ ԱԺ պաշտոնական կայք, «Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով կմեկնի Ամերիկայի Միացյալ Նահանգներ» (12.07.2019), մուտք՝ 15.11.2020, <https://bit.ly/3lBhf9y>

<sup>12</sup> Տես ՀՀ ԱԺ պաշտոնական կայք, «Մեկնարկել է ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի աշխատանքային այցն ԱՄՆ» (16.07.2020), մուտք՝ 14.11.2020, <https://bit.ly/2UvU7xh>

<sup>13</sup> Տես ՀՀ ԱԺ պաշտոնական կայք, «Արարատ Միրզոյանն ընդունել է Դեյմոն Վիլսոնի գլխավորած պատվիրակությանը» (11.09.2019), մուտք՝ 17.11.2020, <https://bit.ly/2Uvfp4q>

լինգ: Այդ ուղեղային կենտրոնների շարքում էին բրիտանական այնպիսի հայտնի հաստատություններ, ինչպիսիք են Ռազմավարական հետազոտությունների միջազգային, Ադամ Սմիթի, Տնտեսական հարաբերությունների, Քաղաքականության ուսումնասիրությունների և այլ ինստիտուտներ: Հետազոտության հեղինակների կարծիքով, մասնավորապես՝ Ադամի Սմիթի ինստիտուտի ֆինանսավորման աղբյուրները կարող են լինել օտար երկրներից: Հեղինակները մտահոգություն էին հայտնել, որ որոշ երկրներ, իրենց շահերից ելնելով, քողարկված կերպով կարող են ազդել բրիտանացի ընտրողների և քաղաքական գործիչների վրա<sup>14</sup>:

Հարկ է նշել, որ օտարերկրյա ազդեցության խնդիրը առավել սուր է արտահայտվում զարգացող երկրներում, որտեղ ներքին ֆինանսական աղբյուրների չափազանց անբավարարության և պետության «հմունային» համակարգի անհամեմատ բարձր խոցելիության պայմաններում ուղեղային կենտրոնների ոլորտը շատ ավելի ռիսկային վիճակում է: Երկարաժամկետ կտրվածքում նման իրավիճակը պետության ինտելեկտուալ ինքնիշխանության համար կարող է վերաճել սպառնալիքի՝ լրջորեն ներգործելով ներքաղաքական օրակարգի ձևավորման տրամաբանության վրա: Ինչպես ճշմարտացիորեն նշում է պ.գ.դ., պրոֆեսոր Լեոնիդ Կարնաուշենկոն՝ ինքնիշխանության խնդիրը, ժամանակակից հասարակությունում դրսևորվելով տարբեր տեսանկյուններից, ձեռք է բերում լուրջ նշանակություն: Նրա խոսքով՝ հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ «ինքնիշխանություն» եզրույթն ունի բազմաթիվ մեկնաբանություններ, այդ թվում՝ գերիշխանություն, սուբյեկտի գերագույն իրավունքներ, որոնք անկախ են որևիցե արտաքին ուժերից, հանգամանքներից և անձանցից<sup>15</sup>: Բավական խոսուն է նաև բրիտանական ճանաչված Chatham House-ի

կամ Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի տնօրեն, դոկտոր Ռոբին Նիբլեթի դիտարկումը՝ ըստ որի անցած դարի ուղեղային կենտրոնների հիմնադիրների ժառանգներ արդարացիորեն կարող են լինել միայն այն կառույցների ղեկավարները, որոնք առավելագույն կերպով ձգտում են պահպանել իրենց ինտելեկտուալ անկախությունն ու ինստիտուցիոնալ ինքնավարությունը և, միաժամանակ, հարկադրում են կառավարություններին, մասնավոր հաստատություններին ու հասարակությանը հայացք գցել առավել հեռու հորիզոններին<sup>16</sup>:

Քննարկվող հարցի կապակցությամբ հարկ է նշել նաև այն մասին, որ փորձագիտական հանրույթը, առանց մտավոր աշխատանքի համար անհրաժեշտ նպաստավոր միջավայրի և պայմանների առկայության, գոյության, ինքնադրսևորման և զարգացման այլ եղանակ պարզապես չունի և երբեմն ստիպված է լինում հենվել արտաքին ֆինանսավորման վրա<sup>17</sup>: Միաժամանակ, պետության կողմից նման խնդիրները հետևողականորեն անտեսելու, պետություն-ուղեղային կենտրոններ փոխգործակցության համապատասխան կառուցակարգեր չներդնելու, ոլորտը չկանոնակարգելու և երկրի ներսում ֆինանսական աղբյուրներ չձևավորելու դեպքում այդ մտավոր ներուժը կարող է արտահոսել արտերկիր, որտեղ առկա է ինքնարտահայտման առավել բարենպաստ միջավայր: Ի դեպ, այս պայմաններում արտերկրի շահագրգիռ սուբյեկտները ֆինանսավորման տարբեր սխեմաների միջոցով կարող են վերահսկողություն սահմանել նման հաստատությունների նկատմամբ՝ փաստացի ձևավորելով վերջիններիս գործունեության օրակարգը, թեմատիկ և գաղափարախոսական ուղղվածությունը՝ այդպիսով միջնորդավորված ազդեցություն գործելով նաև տվյալ երկրի հանրային քաղաքականության, այդ թվում՝ որոշում

<sup>14</sup> *Think Tanks in the UK 2017: Transparency, Lobbying and Fake News in Brexit Britain*. Transparify, Bristol, UK and Tbilisi, Georgia, p. 7-8, Retrieved August 25, 2020, <https://static1.squarespace.com/static/52e1f399e4b06a94c0cdaa41t/58996330b8a79b6ede1c9891/1486447414103/Transparify+++Think+Tank+Transparency+in+the+UK+2017.pdf>

<sup>15</sup> Карнаушенко, Леонид (2015). Интеллектуальный суверенитет государства и проблема его обеспечения в обществе начала XXI века, *Общество и право*, 4 (54), с. 11.

<sup>16</sup> Niblett, Robin (2018). Rediscovering a sense of purpose: the challenge of western think-tanks, *International Affairs*, Vol. 94, N 6, p. 1428 (pp. 1409-1430); DOI: 10.1093/ia/iiy199

<sup>17</sup> Steu Atoyán, Vardán (2017). Armenian Think Tanks influence aspects on Public Policy. *European Journal of Law and Political Sciences*, 2, 59-62.

կայացնողների, հասարակական կարծիքի և ներքաղաքական օրակարգի ձևավորման վրա: Հանրագումարում կարող ենք նշել, որ պետության ներսում ֆինանսական աղբյուրների անբավարարության պարագայում արտերկրից ստացվող դրամաշնորհների միջոցով ուղեղային կենտրոնները հնարավորություն են ստանում իրականացնելու մասնագիտական գործունեություն և ունենալու եկամտի աղբյուր, ինչը նաև թույլ է տալիս ամբողջովին չփոշիացնելու երկրի մտավոր ներուժը: Ինչևիցե, արտաքին ֆինանսավորմանը հավասարակշռող և դրան դիմելու գայթակղությունը զսպող ներքին ֆինանսավորման աղբյուրների բացակայությունն աստիճանաբար ձևավորում է ուղեղային կենտրոնների գործունեության օրակարգային ուղղվածության (ազգային շահպատվիրատուի հետաքրքրություններ) որոշակի անհավասարակշռություն: Միաժամանակ, այդպիսի իրավիճակում և պետություն-փորձագիտական հանրույթ համագործակցության անբավարար մակարդակի պայմաններում ներքին կամ արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերի վերաբերյալ կայացվող որոշումների արդարացիությունը ներկայացնելու, փաստարկելու, առավել բարենպաստ տեղեկատվական միջավայր ձևավորելու և հանրության համար ընկալելի դարձնելու գործընթացում քաղաքական իշխանությունը հաճախ զրկվում է հավասարակշռված մեկնաբանման օժանդակությունից, անկախ փորձագիտական շրջանակների կողմից չի ստանում բավարար աջակցություն, հատկապես, երբ այդ որոշումները լինում են ոչ ժողովրդահաճո, ոչ միարժեք ընդունվող կամ ունենում են էական նշանակություն որոշակի ոլորտում քաղաքականության կամ մոտեցումների փոփոխությունների առումով, որի օրինակները բազմաթիվ են թեկուզ Հայաստանի Հանրապետության նախորդող շուրջ երեսնամյա պատմության ընթացքում: Այդպիսի իրադրությունը հաճախ էապես հարվածում է պետական ինստիտուտների վարկանիշին և թուլացնում հանրային դիրքերը, ինչը, իր հերթին, կուտակվող հասարակական դժգոհությունը քաղաքական ցնցումների և անհնազանդության վերափոխելու առումով որոշակի

ռիսկեր է ծնում:

Մյուս կողմից, արտերկրից ֆինանսավորման թեկուզ ոչ կոշտ սահմանափակումը, առանց ուղեղային կենտրոնների գործունեությանն անհրաժեշտ ներպետական ֆինանսական աղբյուրների ձևավորման, կարող է հանգեցնել ոլորտի կազմալուծման և ուղեղների արտահոսքի: Այս է պատճառը, որ շատ երկրներ թեև կիրառում են որոշակի սահմանափակումներ, սակայն, սովորաբար, խուսափում են չափազանց կոշտ միջոցներից և առավել նախընտրում ձևավորել ֆինանսավորման ներպետական աղբյուրներ, կանոնակարգման նպատակով կիրառել փափուկ գործիքներ և ընդդիմ օրակարգով ծանրաբեռնել հայրենական ուղեղային կենտրոնները՝ ձգտելով ռազմավարական գաղափարների արտադրության ոլորտում պահպանել ինքնիշխանությունը և արտերկրի դերակատարների համար սահմանափակել հանրային քաղաքականության վրա ներգործելու հնարավորությունները:

### Ամփոփում

Այսպիսով՝ կարող ենք վկայել, որ ուղեղային կենտրոնների արտաքին ֆինանսավորման հետ կապված ռիսկերը տարբեր երկրներում ձեռք են բերում օրակարգային նշանակություն, և խնդիրը կարիք ունի առավել հանգամանալից ուսումնասիրության ու մշտադիտարկման: Միաժամանակ, միջազգային փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ ոլորտի կանոնակարգումն ու օտարերկրյա ֆինանսավորման սահմանափակման կառուցակարգերի ներդրումը ամբողջովին չեն կարող բացառել արտաքին բացասական ազդեցությունները, և կարիք կա առավել ճկուն ու տարբեր հանգամանքներ հաշվի առնող իրավակարգավորումների մշակման: Մյուս կողմից, չափազանց խիստ կարգավորումները հատկապես զարգացող երկրներում կարող են մեծապես վնասել ուղեղային կենտրոնների ոլորտին և վտանգել վերջիններիս գոյությունը, եթե չուղեկցվեն համապատասխան քաղաքական մշակույթի և ներպետական ֆինանսական աղբյուրների ձևավորմամբ:

Հետևաբար, ուղեղային կենտրոնների ոլորտի՝ ինչպես պետական, այնպես էլ

մասնավոր հատվածից ֆինանսավորման հնարավորությունների մեծացումը, մասնավորապես՝ հետազոտական պատվերների կառուցակարգերի զարգացման, նպատակային հիմնադրամների ձևավորման, պետություն-մասնավոր հատված-փորձագիտական հանրային առավել սերտ եռակողմ համագործակցության, որոշումների կայացման գործընթացում անաչառ

ուղեղային կենտրոնների ներգրավման ճանապարհներով, կարող է էականորեն բարելավել ոլորտում առկա իրավիճակը, կամրջել գիտելիքն ու քաղաքականությունը և ավելացնել պետական համակարգի հնարավորությունները՝ ոլորտում առկա մտավոր ռեսուրսը փափուկ մեխանիզմներով ծառայեցնելու ազգային շահերին ու պետականությանը:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթոյան Վ. (2020), Ուղեղային կենտրոնների ռազմավարական արդիականացման հարցեր, «Ամբերդ» տեղեկագիր, 3 (4), էջ 64-70:
2. Աթոյան Վ. (2019), *Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները*, «Ձանգակ» հրատ., Եր., 216 էջ:
3. Աթոյան Վ., Թադևոսյան Ռ. (2016), Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում, «21-րդ ԴԱԲ», 6 (70), էջ 70-84:
4. Գալստյան Դ., Խալաթյան Մ. (2016), «Օտարերկրյա գործակալների մասին» օրենքի վերաբերյալ. տարբեր երկրների փորձը, «Գլոբուս», 4 (73), էջ 51-57:
5. ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, [www.parliament.am](http://www.parliament.am)
5. Atoyan, V. (2017). Armenian Think Tanks influence aspects on Public Policy. *European Journal of Law and Political Sciences*, 2, 59-62.
6. Bruckner T., Foreign Lobbyist Gets Free Platform at Georgetown University, Atlantic Council, *Huffington Post* (Jun/25/2015), Retrieved September 7, 2020, [https://www.huffingtonpost.com/till-bruckner/brenda-shaffer-oil-gas\\_b\\_7654646.html?fbclid=IwAR2K054Gtx3bA-weYbiv7\\_CK3EG16ijXNQZnY-0oVAW4j\\_60Mn-VSInE\\_ceY](https://www.huffingtonpost.com/till-bruckner/brenda-shaffer-oil-gas_b_7654646.html?fbclid=IwAR2K054Gtx3bA-weYbiv7_CK3EG16ijXNQZnY-0oVAW4j_60Mn-VSInE_ceY)
7. *Chinese Influence & American Interests (Promoting Constructive Vigilance)*. Report of the Working Group on Chinese Influence Activities in the United States, Hoover Institution Press, Stanford University, 2018, Retrieved August 25, 2020, [https://www.hoover.org/sites/default/files/research/docs/chineseinfluence\\_americaninterests\\_fullreport\\_web.pdf](https://www.hoover.org/sites/default/files/research/docs/chineseinfluence_americaninterests_fullreport_web.pdf)
8. Johnson, Elina. At the Atlantic Council, Foreign Money Talks, *The Washington Free Beacon*, August 7, 2020, Retrieved, August 30, 2020, <https://freebeacon.com/national-security/at-the-atlantic-council-foreign-money-talks/>
9. Lipton E., Williams B., Confessore N., Foreign Powers Buy Influence at Think Tanks, *The New York Times* (Sep/6/2014), Retrieved August 30, 2020, [https://www.nytimes.com/2014/09/07/us/politics/foreign-powers-buy-influence-at-think-tanks.html?\\_r=0](https://www.nytimes.com/2014/09/07/us/politics/foreign-powers-buy-influence-at-think-tanks.html?_r=0)
10. McGann, James G., "2019 Global Go To Think Tank Index Report" (2020). *TTCSP Global Go To Think Tank Index Reports*. 17, p. 229, Retrieved September 3, 2020, [https://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1018&context=think\\_tanks](https://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1018&context=think_tanks)
11. Niblett, R. (2018). Rediscovering a sense of purpose: the challenge of western think-tanks, *International Affairs*, Vol. 94, N 6: 1409-1430, DOI: 10.1093/ia/iyy199
12. Smaglyi K., *Hybrid Analytica: Pro-Kremlin Expert Propaganda in Moscow, Europe and the U.S. (A Case Study on Think Tanks and Universities)*. Institute of Modern Russia, Research Paper, Retrieved September 7, 2020, [https://static1.squarespace.com/static/59f8f41e-f14aa13b95239af0/t/5c6d8b38b208fc7087fd-2b2a/1550682943143/Smaglyi\\_Hybrid-Analytica\\_10-2018\\_upd.pdf](https://static1.squarespace.com/static/59f8f41e-f14aa13b95239af0/t/5c6d8b38b208fc7087fd-2b2a/1550682943143/Smaglyi_Hybrid-Analytica_10-2018_upd.pdf)
13. *Think Tanks in the UK 2017: Transparency, Lobbying and Fake News in Brexit Britain*. Transparify, Bristol, UK and Tbilisi, Georgia, p. 7-8, Retrieved August 25, 2020, <https://static1.squarespace.com/static/52ef399e-4b06a94c0cdaa41/t/58996330b8a79b6e-de1c9891/1486447414103/Transparify+++Think+Tank+Transparency+in+the+UK+2017.pdf>
14. «Генеральная прокуратура Российской Федерации приняла решение о признании нежелательной на территории Российской Федерации деятельности иностранной неправительственной организации», (25/07/2019), дата обращения: 19/11/2020, <https://www.genproc.gov.ru/smi/news/genproc/news-1662746/>
15. «Минюст России включил НПО "Атлантический совет" в перечень нежелательных», (29/07/2019), дата обращения: 19/11/2020, <https://tass.ru/ekonomika/6711848>
16. Карнаушенко, Л. (2015). Интеллектуальный суверенитет государства и проблема его обеспечения в обществе начала XXI века, *Общество и право*, 4 (54), с. 10-14.



**Вардан АТОЯН***Заместитель директора-старший эксперт  
исследовательского центра «Амберд», АГЭУ,  
доктор политических наук*

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

**ПРОБЛЕМЫ ИНОСТРАННОГО ВЛИЯНИЯ В СФЕРЕ МОЗГОВЫХ ЦЕНТРОВ**

Статья посвящена анализу проблем иностранного влияния в сфере мозговых центров. Обсуждаются вопросы внешнего финансирования мозговых центров, обеспечения интеллектуального суверенитета государства, а также риски, возникающие в случае игнорирования этих вопросов. Рассматривается международный опыт и наблюдаемые развития в данной сфере. На основе сделанного анализа представлены некоторые предложения, которые могут быть полезны для регулирования и развития сферы мозговых центров, а также для более эффективного использования интеллектуальных ресурсов подобных институтов в национальных интересах государства.

**Ключевые слова:** *мозговые центры, иностранное влияние, интеллектуальный суверенитет, публичная политика, финансовые ресурсы, журналистское расследование, политическая культура*

**Vardan ATOYAN***Deputy Director & Senior Expert of «Amberd» Research Center, ASUE,  
Doctor of Sciences (Political Science)*

SECURITY AND CHALLENGES

**ISSUES OF FOREIGN INFLUENCE IN THE THINK TANK SECTOR**

The paper analyzes the issues of foreign influence in the think tank sector. The issues of foreign financing of think tanks, ensuring the intellectual sovereignty of the state, as well as the risks that arise if these issues are ignored are discussed. International practice and observed developments in this area are considered. Based on this analysis, some suggestions are presented that can be useful for regulating and developing the think tank sector, as well as for a more effective use of the intellectual resources of such institutions in the national interest of the state.

**Keywords:** *think tanks, foreign influence, intellectual sovereignty, financial resources, public policy, investigative journalism, political culture*